«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Հեքիաթի ուսուցումը տարրական դասարաններում**

ՀԵՂԻՆԱԿ **Հասմիկ Մարգարյան**

ԱՌԱՐԿԱ Դասվար

ՂԵԿԱՎԱՐ Արմենուհի Մելքոնյան

ՍԵՎԱՆ 2023

# Բովանդակություն

ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

1.1 ՀԵՔԻԱԹՆ ԻԲՐԵ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՐՎԵՍՏԻ ԺԱՆՐ

1.2 ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ (ԴԵՐԱԽԱՂ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ)

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հեքիաթներն ստեղծվել են մարդկության ամենավաղ շրջանում:Գիտության անբավարար զարգացվածության աստիճանը մարդուն չէր տվել այլ ճանապարհով իր երազանքներին հասնելու և դրանք իրականություն դարձնելու հնարավորություն:Հեքիաթները լինում են իրապատում,հրաշապատում և կենդանական:

Կենդանական հեքիաթները հյուսվել են հնադարում, նրանց հերոսները հիմնականում կենդանիներն են:Ժողովուրդը կենդանիներին անձնավորել է, նրանց գործողությունների և հարաբերությունների մեջ պարզ,սակայն դաստիարակչական լուծում տալով դրանց:

Իրապատում հեքիաթն ունի կենցաղային, հերոսական,սոցիալական բովանդակություն:

Հրաշապատում կամ կախարդական հեքիաթներում հանդես են գալիս վհուկը, կախարդը,ձին,սփռոցը:

Մարդկությունը մշտապես հեքիաթներ է հորինել և դրանք փոխանցել սերնդեսերունդ:Դա կենսափորձի փոխանցման բնական և հուսալի միջոց է:Ժողովրդական հեքիաթները գիտելիքների շտեմարաններ են:

Հայ ժողովրդական հեքիաթների մի զգալի մասը հյուսվել է ազգային-ստեղծագործական հիմքով և տարբերվում է ուրիշ ժողովուրդների հեքիաթներից՝ լեզվով,կյանքի,կենցաղի,բնության նկարագրով և հերոսների հոգեկան կերտվածքով:

Այսօր զարգացած տեխնոլոգիաների դարաշրջանում երեխաների մոտ հեքիաթները փոխարինվել են համակարգչային խաղերով:Երեխաների մոտ նկատվում է քաղց:Քաղց,որը չի զգացվում իրենց կողմից:

Այդ իսկ պատճառով շատ կարևոր է հեքիաթների ուսուցումը մայրենիի դասաժամերին:

Հեքիաթների նպատակային ուսուցումը տարրական դասարաններում նպաստում է կրտսեր դպրոցականի անհատականության,մտածողության զարգացմանն ու ձևավորմանը,օգնում կյանքի շատ երևույթներ հասկանալ,գեղեցիկը,բարին տեսնել,ճանաչել,դատողություններ և վերլուծություններ անել:

## Հետազոտության արդիականությունը՝

Մայրենիի դասագրքերում յուրահատուկ տեղ ունի հեքիաթը,որը դպրոցականների սիրելի ժանրերից է և բոլոր ժամանակներում մեծ դեր է ունեցել աշակերտների արժեքային համակարգի ձևավորման գործում:Այսօր էլ հեքիաթի՝ նոր մեթոդներով

համակողմանի յուրացումը մեծացնում է նրա դաստիարակչական,ուսուցողական,ճանաչողական նշանակությունը,խթանում դպրոցականի երևակայության զարգացումն ու ստեղծագործական կարողությունների ձևավորումը:

## Հետազոտության նպատակը՝

Աշխատանքի նպատակը մայրենիի դասագրքերում զետեղված հեքիաթների՝ դպրոցականների դաստիարակության, աշխատասիրության, մտածողության, բարոյական արժեքների ձևավորման, զարգացման վրա ներգործության բացահայտումն է և հեքիաթաստեղծման կարողությունների ձևավորմանը նպաստող մեթոդական քայլաշարի համակարգումը:

## Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմայի վերաբերյալ ուսումնամեթոդական գրականություն,
2. մատնանշել հեքիաթների անմիջական ազդեցությունը աշակերտների երևակայության զարգացման և հեքիաթաստեղծման կարողության ձևավորման վրա,
3. հիմնավորել կրտսեր դպրոցականների անհատականության ձևավորման գործում հեքիաթների բացառիկ նշանակությունը,
4. կատարել հեքիաթաստեղծման կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ և ստուգել դրանց արդյունավետությունը նշված գործընթացում:

## Հեքիաթի ուսուցումը տարրական դասարաններում

Հեքիաթը երեխաների համար գոյություն ունեցող միակ իրականությունն է: Հեքիաթն ունի աշխարհաճանաչողական նշանակություն:Երեխաների համար դժվար է ընկալել իրականությունը,ուստի այն նրանց մատուցվում է հեքիաթի միջոցով: Հեքիաթը երեխաներին մատչելի լեզվով կյանք է սովորեցնում: Նրանք իրենց շրջապատին ծանոթանում են հեքիաթների միջոցով:Հեքիաթով է սկսվում երեխայի ծանոթությունը արտաքին աշխարհի հետ:Ցանկացած հեքիաթ պատմություն է մարդկանց փոխհարաբերությունների,մեր կյանքում գործող օրենքների մասին:Հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել երեխաների երևակայությունը և ստեղծագործական պոտենցիալը,ինչպես նաև մանկական աշխարհայացքի ձևավորմանը:Երեխաներն ավելի հեշտ են ընկալում հեքիաթը,քան մեծահասակների դաստիարակչական քարոզները:Մեծահասակները,ցանկանալով երեխայի հետ խոսել իրենց դժվարությունների մասին կամ ինչ-որ բան հուշել,դժվարանում են համապատասխան բառեր գտնել,վախենում են,որ երեխան ճիշտ չի հասկանա իրենց:Այդ իրավիճակից ելքն այն է,որ մեծահասակը երեխայի հետ ընկղմվի երևակայության և կախարդանքի աշխարհը,իսկ գործնականում ամենալավ օգնականը հեքիաթային պատմություններն են:

Յուրաքանչյուր հեքիաթ ունի դաստիարակչական հզոր արժեք և բարոյական կարևոր սկզբունքներ,որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքների,խոսքերի միջոցով:Աննկարագրելիորեն մեծ է երեխայի հոգու,զցագմունքների և համոզմունքների վրա թողած ազդեցությունը:Մեծ մանկավարժ Վ.Ա.Սուխոմիլինսկին գտնում է,որ յուրաքանչյուր մարդ մանուկ հասակում պետք է անցնի բարի զգացումների դաստիարակության դպրոցը:Երեխան ակամա հեքիաթներում գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ,փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ:Կրտսեր դպրոցական տարիքի վաղ շրջանում փոքրիկներն ուզում են հավատալ հեքիաթում տեղի ունեցող դեպքերին:Նրանք հիանում են հեքիաթների բարի հերոսների հաղթանակով,հնարավորությամբ,ձգտում նմանվել նրանց՝ լինել բարի,արդար,ազնիվ,արձագանքող:Սա է հեքիաթի ուժը,որի բացահայտումով էլ պայմանավորված է նրա բարոյադաստիարակչական կողմը:

Հեքիաթների հեղինակը ժողովուրդն է:Նա է ստեղծել դրանք,ինչպես առասպելները,էպոսը,առածները:Դա եղել է շատ հին ժամանակներում:Ավելի ուշ առանձին հեղինակներ մշակում են ժողովրդական հեքիաթները:Նրանք նաև ինքնուրույն հեքիաթներ են գրում:Այդ տեսակի հեքիաթները կոչվում են հեղինակային:Հեքիաթները կատարել են հասարակական լայն զանգվածների լավագույն ձգտումների և իղձերի

յուրահատուկ հաղորդչի դերը,ամրապնդել են նրանց նվիրական ավանդները իրար հաջորդող սերունդների գիտակցության մեջ:Հեքիաթների միջոցով ժողովուրդը դրսևորել է այն ոգևորումները,որոնք մղել է ինքը բնության տարերային ուժերի հաղթահարման համար,արտահայտել իր մտորումները:Մարդիկ դարեր շարունակ ոգևորվել են հեքիաթների հերոսների խիզախության,խելքի և հնարամտության հիանալի օրինակներով,արդարությունը պաշտպանելու անձնազոհ պատրաստակամությամբ:Հեքիաթները երեխայի մեջ առաջացնում են գեղագիտական ապրումներ,սեր և հարգանք բնության,հայրենիքի,իրեն շրջապատող մարդկանց նկատմամբ:Հայկական ժողովրդական հեքիաթները դաստիարակում են երեխայի մեջ բնության նկատմամբ ջերմ սեր:Բնության մեջ մարմնավորվել է ժողովրդի արարչագործ ոգին:Հեքիաթները երեխայի  վաղ մանկական շրջանում բնության նկատմամբ սիրո առաջին դաստիարակներն են:

Հեքիաթը միաժամանակ ստեղծագործական ունակությունների,բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:Հեքիաթների ուսուցումը մայրենի լեզվի դասաժամերին նպաստում է երեխայի բառապաշարի հարստացմանը,օգնում է ճիշտ և տրամաբանական խոսք կազմել:Հեքիաթը երեխայի խոսքը դարձնում է էմոցիոնալ և պատկերավոր:Ձևավորվում են հարցերը ճիշտ ձևակերպելու ունակությունները:Երեխաները հեքիաթի ուսուցման դասաժամերին պատկերավոր են ընկալում նաև չարն ու բարին:Հեքիաթներում միշտ հաղթում է բարին, ինչն էլ կօգնի երեխային հաղթահարել կյանքի դժվարությունները:

Այսպիսով,հեքիաթը յուրաքանչյուր փոքրիկի լիարժեք զարգացման ամենամատչելի տարբերակներից մեկն է:Պետք չէ թերագնահատել հեքիաթի դերը երեխայի կյանքում:Ճիշտ ընտրած հեքիաթը դրական ազդեցություն կթողնի երեխայի հուզական ներաշխարհի վրա,ինչպես նաև կզարգացնի սեփական անձի և ուժերի նկատմամբ հավատը:Երեխայի համար հեքիաթների կարևորության,նշանակության մասին կարելի է խոսել անվերջ:Ի վերջո,երեխան,որ մեծացել է հեքիաթներ ունկնդրելով և կարդալով,նկատելիորեն ավելի առողջ է,խելացի և քաջ:

## 1.1. Հեքիաթն իբրև ժողովրդական բանարվեստի ժանր:

Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ստեղծագործություններից են,դրանք ծագել են հին ժամանակներում,սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել և հուզել ընթերցողներին իրենց պարզությամբ և լավատեսությամբ:Հեքիաթների լավագույն

նմուշները այսօր էլ չեն կորցրել իրենց հմայքն ու ուժը և գեղարվեստական մեծ բավականություն են պատճառում մարդկանց:Նրանք ունեն յուրահատուկ նշանակություն այնքանով,որքանով որ բանաստեղծական բարձր ձևերի մեջ մարմնավորում են ժողովրդի դարավոր մտքերն ու զգացմունքները,մարդկության անկրկնելի մանկությունը:Հեքիաթները նաև մշակվել են տարբեր հեղինակների կողմից:Ժողովրդական հեքիաթների լավագույն մշակողներ են եղել Ղազարոս Աղայանը,Հովհաննես Թումանյանը,Ստ.Լիսիցյանը,Ստեփան Զորյանը և ուրիշներ:Կարևոր են նաև օտար հեքիաթները,որոնք անհրաժեշտություն են՝ այլ ժողովուրդների կյանքին,կենցաղին,մտածողությանը ու ստեղծագործություններին ծանոթանալու համար:Մարդկությանը հմայել են արդարությունը պաշտպանող և չարը հալածող հեքիաթային խիզախները:Հեքիաթներն իրենց հերոսական և մարդասիրական ոգով,առօրյա կենսափորձից բխող առողջ բարոյախոսությամբ, խորիմաստ փիլիսոփայությամբ գրավել ու գրավում են բոլոր տարիքի ընթերցողներին,առավել ևս մանուկներին:Թումանյանը հեքիաթների մասին ասել է,որ դրանք ամենաիմաստուն գրվածքներն են,քանի որ դրանց մեջ խորհրդանշական ձևով արտահայտված են հավերժական գաղափարներ:Իսկապես,ամեն հեքիաթ բարձր գաղափարների և մարդկային հարաբերությունների արտահայտություն է:Հեքիաթներում հերոսների բնավորության գծերը մեկ առ մեկ չեն հիշվում,պարզապես ասվում է՝ չար ու բարի:Հեքիաթի մեջ մարդիկ և դեպքերը պատկերվում են չափազանցված կամ այլաբանորեն:Հեքիաթների մեծ մասն արձակ է:Բայց պատահում են նաև չափածո հեքիաթներ:Օրինակ՝ Հովհաննես Թումանյանի «Գառնիկ ախպերը»:Հեքիաթը,որպես գրական տեսակ,պատկանում է էպիկական սեռին:Հեքիաթները պատմվում են փոխանցվելով բերանից բերան,մի ժողովրդից մյուսին,նույն բովանդակությամբ հեքիաթը տեսնում ենք տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ:Հեքիաթների մեծ մասին բնորոշ է նույն սկիզբը,ինչպես՝ «Լինում է,չի լինում», «Կար չկար», «Ժուկով ժամանակով», «Ժամանակով», «Չգիտեմ ո՛ր երկրում,ո՛ր թագավորության մեջ»:Հեքիաթում երևակայությամբ մարդը հաղթում է ժամանակին և տարածությանը:Ժամանակը հեքիաթում կարող է կանգնել կամ թռչել տիեզերական արագությամբ:Բացի կայուն սկզբից,հեքիաթն ունենում է բարի ավարտ.վերջում բարին միշտ հաղթում է,իսկ չարը՝ պատժվում:Վերջաբանի համար էլ հատուկ արտահայտություններ կան,ինչպես՝ «Երկնքից երեք խնձոր ընկավ»», «Նրանք հասան իրենց մուրազին,դուք էլ հասնեք ձեր մուրազին»:Ժողովրդական հեքիաթները մշակվել են տարբեր ժողովուրդների դասական գրողների կողմից:Ա.Ս.Պուշկինը ուսումնասիրել և մշակել է ռուսական բազմաթիվ հեքիաթներ:Ժողովրդական հեքիաթների հանդեպ անսհաման սեր է ունեցել Հովհաննես Թումանյանը:Նրա դուստրը՝ Նվարդ Թումանյանը,իր հուշերում գրում է հոր խոսքերը.«Հեքիաթները անդունդներ են՝ խորը,անծայր,անվերջ,հարուստ,շքեղ... Հեքիաթն

ամենաբարձր ստեղծագործությունն է,նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել,բայց հեքիաթների են ձգտում»:

Հեքիաթները լինում են երեք տեսակ՝ բուսակենդանական,հրաշապատում և իրապատում:Իրապատում հեքիաթները լինում են կենցաղային,հերոսական,սոցիալական բնույթի և այլն:Այս բոլորի հիմքն էլ մարդկային կյանքն է՝ բազմապիսի փոխհարաբերություններով:

Հեքիաթում իրականն ու երևակայականը հանդես են գալիս միաձուլված:Հրաշապատում հեքիաթները, լինելով նախնադարյան մարդու ստեղծագործություններ,վառ երևակայության,հոգիների,կախարդական աշխարհի և գերբնական երևույթների հետ կապված պատմություններ են,որտեղ հերոսներին օգնում կամ խանգարում են թռչող գորգը,չար կախարդները և բարի փերիները:Կախարդական հեքիաթների հիմքում ընկած է չարի և բարու պայքարը,որն ավարտվում է բարու հաղթանակով:

Բուսակենդանական հեքիաթների հերոսները բույսերն ու կենդանիներն են:Նրանցից յուրաքանչյուրը պատկերվում է իրեն հատուկ գծերով:Օրինակ՝ աղվեսը խորամանկ է,նապաստակը՝ վախկոտ և այլն:Կյանքի մանրուքների մասին չէ,որ ժողովուրդը հորինում է հեքիաթ. ամեն մի հեքիաթի մեջ առաջ են քաշվում սոցիալական խոշոր հարցեր:Այդ սոցիալական խնդիրներն այնքան պարզ ձևով են ներկայացվում,որ հեքիաթը երեխաներին սոցիալական կյանքին ծանոթանալու լավագույն միջոցն է դառնում:Ժողովրդական հեքիաթներում ընդգծված է ժողովուրդների միասնության գաղափարը:Բազմաթիվ հեքիաթներ կան,որոնցում դրական հերոսները հաղթանակի են հասնում այլ ազգերի ներկայացուցիչների օգնությամբ,շատ հեքիաթներում դրական հերոսը սիրահարվում է այլազգի աղջկա և հաղթահարում է բազում դժվարություններ հանուն սիրո:Ժողովուրդների մեջ օրենքն է սահմանել թշնամանք,իսկ ժողովուրդները չեն հեռացել եղբայրության կամուրջից:

Հեքիաթների դերը տարրական դասարաններում կրթության և հոգևոր աշխարհում անգնահատելի է:Հեքիաթը լայն հնարավորություն է ստեղծում երեխաների երևակայության,ակտիվության,մտահորիզոնի և ինքնուրույնության զարգացման համար:Հեքիաթը կարող է հաճելի ժպիտ պարգևել մանկանը,մղել նրան մտորումների գիրկը և տրամադրել ստեղծագործական աշխատանքի:Հեքիաթների կերպարները,պատկերներն ու իրադարձությունները հեշտությամբ ամրակցվում են հիշողության մեջ և մտապահվում երկար ժամանակ:Հեքիաթն ուսուցման արդյունավետության ապահովման տեսակետից ծանրակշիռ տեղ ունի:

## 1.2. Հեքիաթի ուսուցմանը նպաստող միջոցներ (դերախաղ և արտահայտչամիջոցների օգտագործում)

Հեքիաթների ազդեցությունը մեծ է նաև սովորողների բարոյական որակների ձևավորման գործում:Ցանկացած հեքիաթի ճիշտ ուսուցման արդյունքում լինում են դրական արդյունքներ՝ սովորողների մեջ բարոյական որակներ ձևավորելու ուղղությամբ:Բոլոր ժողովրդական հեքիաթներում հաղթանակը շնորհվում է դրական հերոսներին:Գրեթե բոլոր հեքիաթներում դրական կերպարները հաղթահարում են դժվարությունները,հասնում երջանկության և պատժում իրենգ թշնամիներին:Հեքիաթի նմանօրինակ լավատեսական ավարտը ժողովուրդների երազանքների արտացոլումն է:Դա մեկ անգամ ևս ապացուցում է,որ կյանքում ցանկալին ու ընդունելին բարին է՝ բարությամբ,հաշտությամբ ու խաղաղ ապրելու մարդկանց ցանկությունը:Գիտակցելով հոգեբանական-թերապևտիկ հեքիաթների դաստիարակչական ազդեցությունը՝ կարելի է դրանք կիրառել բարոյական դաստիարակության գործընթացում:Թե՛ ուսուցիչը,թե՛ աշակերտը կարող են դառնալ որևէ հոգեբանական հեքիաթի հեղինակ:Հեքիաթի ստեղծման համար առաջադրվում է որևէ վերնագիր,,որը հնարավորություն է ընձեռում դիմել երևակայությանը:Կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաների համար առավել արդյունավետ են կոմուլյատիվ հեքիաթները,որոնց յուրահատուկ կառուցվածքն ամփոփվում է «միևնույն գործողության բազմակի կրկնության մեջ (լատ.cumular-կուտակել):Այդ հեքիաթներում իրադարձությունների զարգացումը համապատասխանում է բառերի կուտակման հետ,իսկ հեքիաթում յուրաքանչյուր օղակի միանալու դեպքում բոլոր նախորդ օղակները հաճախ կրկնվում են («Շաղգամը»,«Գնդլիկ Բոքոնիկը»):Կոմուլյատիվ հեքիաթի այս առանձնահատկությունները նպաստում են խոսքի զարգացմանը,քանի որ «չխոսող» երեխաների խոսքի ընկալման և ծագման մեխանիզմները թերզարգացած են և նրանց համար կարևոր են տեքստի օրինակները:

Այժմյան դպրոցում «Մայրենի»-ի դասագրքերում և ընթերցարաններում բավականին շատ են հեքիաթները:Դրանց դասավանդումն իրականցվում է չորս փուլով՝

- հեքիաթի ընթերցում՝ բովանդակության ամբողջական ընկալման նպատակով
- հեքիաթի երևակայական կողմի բացահայտում
- հեքիաթի բարոյախոսական իմաստի վերհանում
- հեքիաթի լեզվի և ոճի վերլուծություն

Դասը պետք է իրականցվի բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրամասերի

կիրառմամբ:Հեքիաթն ուսումնասիրելուց հետո պետք է անցնել հեքիաթի երևակայական կողմի բացահայտմանը:Սակայն դա պետք է շատ նրբորեն անել,հակառակ դեպքում հեքիաթը կդադարի նպաստել երեխաների երևակայության զարգացմանը:Նախ երեխաները պետք է որոշեն,թե իրենց կարդացած հեքիաթներում նկարագրված դեպքերից որոնք կարող են կատարվել իրականում,որոնք են անիրական,երևակայական:Անհրաժեշտ է նաև երեխաների ուշադրությունը հրավիրել որոշակի բառերի ու արտահայտությունների վրա,քանի որ բառերի միջոցով է առաջին հերթին հնարավոր որոշել հերոսի կարգավիճակը,հերոսի ինչպիսին լինելը և այլն:Պետք է կարևորել նաև հերոսների արարքների նկատմամբ աշակերտների զգացմունքային վերաբերմունքը:Աշակերտներին օգնելու համար կարելի է տալ պատասխանների խումբ՝ թողնելով,որ նրանք ընտրեն իրենց համար ընդունելի պատասխանը:

Կրտսեր դպրոցական տարիքի վաղ շրջանում փոքրիկներն ուզում են հավատալ հեքիաթում տեղի ունեցող դեպքերին:Հեքիաթը կարելի է կարդալ դերերով,բեմականացմամբ:Սա մեծ բավականություն է պարգևում երեխաներին,սակայն դերերով կարդալուց առաջ պետք է կատարել բովանդակության և գաղափարի վերլուծություն,հերոսների բնավորության քննարկում:Այս ամենից հետո կարելի է անցնել բեմականացմանը:

Բացի այդ երեխաներին կարելի է առաջարկել նաև.

1. Նշել ձեր կարդացած հեքիաթներից այն հեքիաթը,որի բովանդակությունը ձեզ ամենաշատն է գրավել:
2. Գրե՛ք հեքիաթի հիմնական միտքն արտահայտող ասացվածքները:
3. Մի հեքիաթ էլ դուք ստեղծեք:
4. Շարունակե՛ք հեքիաթը:
5. Յուրաքանչյուր հեքիաթից առանձնացրե՛ք չարն ու բարին,արդարն ու անարդարը:

Ուսուցիչը պետք է աշխատի նաև այն ուղղությամբ,որ հեքիաթից սովորած նոր բառերն ու ժողովրդական իմաստության նմուշները տեղ գտնեն փոքրիկի բառապաշարում:Կարելի է հանձնարարել,որ երեխաներն ունենան հատուկ տետրեր:Եվ տանը դասին նախապատրաստվելիս տվյալ հեքիաթից դուրս գրեն թանկագին խոսքեր:Կարելի է հանձնարարել նաև,որ երեխաները նկարեն հեքիաթից իրենց դուր եկած պահը,առանձին վերնագրեն դրանք:Ուսուցիչը կարող է հաջողված աշխատանքները ցուցադրել դասարանում և խրախուսել հեղինակներին:

Կարելի է նաև օգտագործել հեքիաթի կառուցվածքի բուրգը:Բուրգի հերթականությունը՝

1. հեքիաթի հեղինակը
2. գործող անձի անվանումը
3. որտեղ է գտնվում
4. առաջին դրվագ
5. երկրորդ դրվագ
6. երրորդ դրվագ
7. հանգուցալուծումը

Կարելի է նաև հեքիաթի քարտեզ գծել՝ լրացնել համապատասխան սյունակները:

Եթե երեխաներն արդեն տիրապետում են նման աշխատանքների,ուսուցիչը կարող է առաջարկել, որ իրենք հորինեն իրենց հեքիաթը և այդ հեքիաթի համար կազմեն իրենց գծագրերը:Այս կերպ երեխան ազատ է լինում իր մտքերն արտահայտելու հարցում,որն էլ հնարավորություն է ընձեռում ուսուցչին ավելի լավ ճանաչել երեխային որպես անհատ:Անհրաժեշտ է հեքիաթի ուսուցման դասերը շաղկապել արտադասարանական ընթերցանությանը:Այս նպատակով կարելի է կազմակերպել ցերեկույթ,միջոցառումներ:Կարելի է ստեղծել մի անկյուն,որտեղ կան «գրպանիկներ»,և երեխաներն իրենց կարդացած հեքիաթներ վերնագրերը,փոքրիկ թղթերի վրա գրած,դնում էին այդ «գրպանիկներում»:Տարեվերջին խրախուսվում են այն երեխաները,ովքեր ամենաշատն էին հեքիաթ կարդացել:

Հեքիաթի պատմումը կամ դերասանների կատարմամբ ունկնդրումը աչքի է ընկնում իր զգացմունքայնությամբ,խոսքի հստակությամբ:Պատմողի հեքիաթային ոճը,ձայնը,դիմախաղերն օգնում են,որ երեխաների տպավորություններն ավելի պայծառ ու կենդանի լինեն:Առավել շահեկան է հեքիաթը պատմել ոչ սովորական պայմաններում՝ գորգի վրա շրջանաձև նստած,բարձերի վրա թիկնած:Երեխաներին շատ հաճելի է հեքիաթը ստեղծագործելով,փոփոխելով պատմել,շարունակել այն,որը կնպաստի ոչ միայն նրա խոսքի զարգացմանը,այլև երևակայության թռիչքին:Կարելի է նաև,որ երեխաները հեքիաթներ հորինեն «Շուռ տված հեքիաթ» մեթոդով:

«Շուռ տված հեքիաթը» հեքիաթի հորինման մի ձև է,որն ստեղծվում է հեքիաթի աղավաղման միջոցով,օրինակ՝ Կարմիր գլխարկը չար է,գայլը՝բարի,Մոխրոտը անպետք

աղջիկ է,զայրացնում է բարի ու մեղմ խորթ մորը,հեզ քույրերին,խլում քրոջ փեսացուին:Այս ձևով շարժման մեջ է դրվում երեխայի երևակայական միտքը:

Կարդացած հեքիաթները վերարտադրելիս պետք է հասնել նրան,որ երեխաները հարազատ մնան նրա լեզվին,ոճին,հաճախ պատմեն հենց այն բառերով,որով շարադրված է հեքիաթը,օգտագործեն հերոսների խոսքերը,արտահայտությունները,ժողովրդի բառն ու բանը:Անպայման պետք է բացատրվեն անծանոթ բառերը կամ երեխաներն իրենք պետք է ասեն օգտագործված բառերի և արտահայտությունների գրական արժեքները:Հեքիաթը վերլուծելիս կարելի է օգտագործել նաև ուսուցչի կամ աշակերտների «կազմած» նկարներով պլանը:Սա պատմելու,վերլուծելու առաջին փուլն է:Հեքիաթի վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով,այնպես էլ ընտրովի,շարքերով,խմբերով,մրցութային և այլ եղանակներով:

Կարելի է անգիր սովորել այն չափածո տողերը,որոնք հաճախ կրկնվում են հեքիաթներում և պատմելիս անգիր արտասանեն դրանք:Հեքիաթի հիմնական միտքն առավել խորությամբ ընկալելու համար անհրաժեշտ է վերլուծել այն,պատմել,թե ով ինչպես է հասկանում այն,ինչ բարոյական գաղափար է ամփոփված այնտեղ:Երեխաները հասկանում են,թե ինչ հաղորդագրություն է թաքնված տվյալ հեքիաթում:

Օրինակ,այն հեքիաթներում,որտեղ ավագ եղբայրները վտանգի են ենթարկում կրտսեր եղբորը,իսկ կրտսեր եղբայրն էլ հաղթում է չարին,երեխաները վերլուծում են,որ կրտսեր եղբորն օգնեց ավագ եղբայրների արարքներից ստացած կենսափորձը:

Այսպիսով,հեքիաթներն այն ստեղծագործություններն են,որոնք երեխայի մոտ զարգացնում են երևակայությունը,մտածողությունը,ձևավորում բարոյական արժեքներ,դաստիարակում նրան,որպես իսկական մարդ:

Ռուս մեծ գրող Ա.Ս.Պուշկինն ասում է. «Հեքիաթը լրացնում է դաստիարակության պակասը,թերացումները»:Հեքիաթների մոգական ուժը կայանում է նրանում,որ երեխաների կողմից այն ընկալվում է միանգամից երկու մակարդակով՝ գիտակցական և ենթագիտակցական:Գիտակցական մակարդակը հեքիաթն ընկալում է այնպես,ինչպես որ կա:Այսինքն երեխան հաղորդակից է լինում հեքիաթների հերոսների ցավին և հասկանում,որ այն իր մասին չէ::Իսկ ենթագիտակցական մակարդակը «հավատում է» իր լսածին և տալիս վարքի փոփոխման համապատասխան ծրագիր՝ վերակարգավորում է արժեքները,հայացքները և դիրքորոշումը:

Այսպիսով,հեքիաթի ուսումնասիրությունն իր ողջ խորությամբ,նրա շուրջ կատարվող

բազմաբնույթ աշխատանքները երեխայի մոտ ձևավորում են բարոյական հատկանիշներ,ճիշտ արժեհամակարգ և նպաստում երեխաների՝ որպես մարդ ձևավորմանը:

## ԴԱՍԻ ՊԼԱՆ.

Դասարան-II

**Թեմա՝** «Երկնքից 3 խնձոր ընկավ» թեմայի ամփոփում

## Դասի նպատակները՝

Աշակերտները՝

- կհարստացնեն մտահորիզոնը հեքիաթի մասին գիտելիքներով
- ձեռք կբերեն տեղեկություններ հեքիաթագիրների կյանքի վերաբերյալ
- կկարողանան գործնականում տարբերակել հեքիաթների տեսակները
- կսովորեն գնահատել սեփական և ուրիշների արարքները

**Մեթոդները՝** մտագրոհ,կենսագրական բանաստեղծություն,խմբավորում:

## Դասի ընթացքը՝

Իմաստի ընկալում.

- «Հեքիաթ» բառն ինչ է ցույց տալիս:
- Հիմա եկեք թվենք այն ամենը,ինչ ենք զգում հեքիաթ բառը ասելիս:
- Ինչպիսի ստեղծագործություն է հեքիաթը:
- Հեքիաթը ստեղծագործության որ ժանրին է պատկանում:
- Հիշե՛ք թե ինչ բառերով են սկսվում հեքիաթները:
- Ինչ բառերով են ավարտվում:
- Եկե՛ք թվարկենք մի քանի հեքիաթներ,որոնք դուք կարդացել ենք:

շուն աղվես արջ

- Տեղեկություններ տանք այս կենդանիների մասին:
- Օգտագործել «Խմբավորում» մեթոդը:
- Աշխատանք քարտերով:
- «Քանդված նախադասություններ» մեթոդը ( վերցված են հեքիաթներից):

## Անդրադարձ

«Կենսագրական բանաստեղծություն» մեթոդը:

- Մեր դասի հիմնական հերոսն ով էր
- **Ես**
- Բնավորությունս-բարի
- Սիրում եմ- ընթերցասեր երեխաների
- Վախենում եմ- չարից,կախարդից
- Ուզում եմ-կարդալ

### 1. Տնային հանձնարարություն

- Գրել տեղեկություն Շառլ Պերոյի մասին

## Եզրակացություն

Վերոնշյալ հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները.

Հատկապես տարրական դասարաններում դասավանդելիս պետք է առավելապես կարևորել հեքիաթի դերը: Այն հանդիսանում է երեխաների առաջին դաստիարակն ու ուղղորդողը:Հեքիաթների միջոցով ուսուցիչն ապահովում է նրանց՝ որպես համակողմանի և ներդաշնակ մարդու ձևավորումը: Հեքիաթների շնորհիվ երեխան գտնում է բարին,նրա մեջ ձևավորվում են բնավորության լավագույն գծերը:Հեքիաթն ուղեկցում է մեզ մեր ողջ կյանքի ընթացքում: Հեքիաթի հիմնական գաղափարը բարու հաղթանակն է,ինչն էլ օգնում է բոլորիս ապրել և պայքարել այս կյանքում:

Որպեսզի աշակերտների մոտ հեքիաթի գաղափարն ավելի տպավորվի.

- նրանք հաճախ պետք է այցելեն տիկնիկային թատրոն,մասնակցեն հեքիաթների բեմականացումներին,
- նրանք կարող են շարունակել հեքիաթները: Օրինակ՝ Հ.Թումանյանի «Քաջ Նազարը», Ղ.Աղայանի «Անահիտը» հեքիաթներն անավարտ են և հնարավորություն են ընձեռում աշակերտներին ազատություն տալ իրենց մտքերին՝ հեքիաթաստեղծման կարողության ձևավորման համար:

## Առաջարկություն

1. Հաճախ կազմակերպել այցելություններ տիկնիկային թատրոն,
2. Հաճախ կազմակերպել հեքիաթների բեմականացումներ,
3. Հաճախ կազմակերպել ստեղծագործական աշխատանքներ:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես 3-4. 2005
2. Ջ.Հ.Գյուլամիրյան «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա». «Զանգակ» հրատ. , 2015:
3. «Մանկավարժություն» գիտամեթոդական հանդես 2012
4. Հովհ. Թումանյան «Երկերի ժողովածու» 1945
5. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 2, «Մանմար», Երևան,2016
6. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 3, «Մանմար», Երևան,2014
7. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 4, «Մանմար», Երևան,2016
8. Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես 3. 2007
9. Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես 5. 2009
10. Ղանալայան Ա.Տ. «Հայ ժողովրդական բանահյուսություն» 1945